ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

Բրյուսել, XXX
[…](2013) XXX նախագիծ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Եվրոպական հարևանության քաղաքականության իրագործումը Հայաստանում. Առաջընթացը 2012 թվականին, առաջարկվող գործողությունները

Փաստաթղթին կից՝

ՀԱՄԱՏԵՂ ՈՒՂԵՐՁԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ, ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Եվրոպական հարևանության քաղաքականությունը. գործընկերությունն ամրացնելու ուղղությամբ աշխատանքը

Հայերեն

Հայերեն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն փաստաթղթում ներկայացվում է ԵՄ-Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության («ԵՀՔ») գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, չնայած որ նպատակահարմարության դեպքում հաշվի են առնվել նաև այդ ժամանակաշրջանից դուրս տեղի ունեցած զարգացումները: Սույն փաստաթուղթը Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակի ամբողջական ուսումնասիրություն չէ: Տարածաշրջանային և բազմակողմանի ոլորտային գործընթացների մասին տեղեկանալու համար ընթերցողին անհրաժեշտ է ծանոթանալ Արևելյան գործընկերության («ԱԳ») իրականացման մասին զեկույցին:

Հայաստանի Հանրապետության կառավարության հետ քաղաքական երկխոսությունը 2012 թվականին խորացել է: Տեղի են ունեցել մի շարք բարձրաստիճան շփումներ, մասնավորապես՝ Նախագահ Սերժ Սարգսյանը հյուրընկալվեց Բրյուսելում մարտին, ինչպես նաև՝ ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաների մի շարք այցելություններ եղան Հայաստան, այդ թվում՝ Եվրոպական խորհրդի Նախագահ Հերման Վան Ռոմպույի այցելությունը հուլիսին, Հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի այցելությունը սեպտեմբերին և Եվրոպական հանձնաժողովի Նախագահ Ժոզե Մանուել Բառոզոյի այցելությունը նոյեմբերին: ԵՄ-Հայաստան ասոցացման համաձայնագրի («ԱՀ»), ներառյալ՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու («ԽՀԱԱԳ») բանակցությունները լավ տեմպով առաջ ընթացան: Վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրերը նախաստորագրվեցին հոկտեմբերին: Դեկտեմբերի 17-ին ստորագրվեց Վիզաների դյուրացման համաձայնագիրը: Խորը ժողովրդավարության և մարդու իրավունքների հարգման ոլորտներում բարեփոխումների առաջընթացի արդյունքում Հայաստանին 2012 թվականին լրացուցիչ 15 միլիոն եվրո հատկացվեց Արևելյան գործընկերության Ինտեգրման և համագործակցության ծրագրի («ԱԳԻՀԾ») շրջանակում: Դեկտեմբերին ԵՄ-ն և Հայաստանը ստորագրեցին Գործընկերության և համագործակցության համաձայնագրի արձանագրությունը ԵՄ-ի ծրագրերին Հայաստանի մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ:

Չնայած որ Հայաստանը լուրջ ջանք գործադրեց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խնդիրների լուծման ուղղությամբ, դեռևս անհրաժեշտ են լրացուցիչ աշխատանքներ, մասնավորապես՝ օրենսդրություն ընդունելու և ի կատար ածելու առումներով: Ինչ վերաբերում է ժողովրդավարությանը, ապա 2012 թվականի մայիսի խորհրդարանական և 2013 թվականի փետրվարի նախագահական ընտրությունները, դիտարկումների համաձայն, լավ անցկացվեցին, բայց դեռևս անհրաժեշտ է ի

կատար ածել կոնկրետ որոշակի բարեփոխումներ՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի («ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ») առաջարկություններին համահունչ, մասնավորապես՝ օրենսդրական դաշտի առնչությամբ:

Բացի դրանից, չնայած ընթացող բարեփոխումներին, դատաիրավական համակարգի նկատմամբ հանրության վստահության մակարդակը մնում է ցածր, և կոռուպցիան, ընկալումների համաձայն, դեռևս բարձր է: ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ նախատեսված Ազգային կանխարգելիչ մեխանիզմը լրացուցիչ կատարելագործման կարիք ունի: Ժամկետային զինծառայողների շրջանում, ազատազրկման վայրերում և ոստիկանության բաժիններում խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերը համարժեքորեն չեն քննվում:

Հայաստանը շարունակել է մակրոտնտեսական հիմնավոր քաղաքականություն և կառուցվածքային բարեփոխումներ իրագործել: Հայաստանը լրացուցիչ առաջընթաց է արձանագրել մակրոտնտեսական քաղաքականության, աղքատության կրճատման և սոցիալական համերաշխության ոլորտներում Գործողությունների ծրագրի նպատակներին հասնելու ուղղությամբ: Տնտեսական ակտիվությունը շարունակել է աճել՝ պայմանավորվելով արտահանման աճով և բնակլիմայական բարենպաստ պայմաններով: Հետագա աճը և տնտեսական զարգացումը կախված կլինեն գործարարության միջավայրի բարելավումից, բյուջեի տևական ամրապնդումից և համաշխարհային տնտեսության իրավիճակից:

ԵՄ-ն շարունակում է առաջ քաշել Մեծամորի ատոմակայանի հնարավորինս շուտ փակման հարցը, քանի որ այն չի կարող կատարելագործվել այնպես, որպեսզի համապատասխանի միջուկային անվտանգության՝ միջազգայնորեն ճանաչված չափանիշներին: Մտահոգություն է պատճառում այն հանգամանքը, որ Հայաստանը դեռևս չի կազմել Մեծամորի շահագործման դադարեցման մանրակրկիտ ծրագիր: Ֆուկուշիմայի միջուկային վթարից հետո Հայաստանը ԵՄ-ի հետ միասին իրականացրել է կայանի ռիսկերի և անվտանգության համապարփակ գնահատում («միջուկային սթրես-տեստ»), որի զեկույցը պետք է ներկայացվի 2013-ի սկզբներին: Հայաստանն ակտիվ դիտորդ է Էներգիայի համայնքի շրջանակներում:

Առաջընթաց ձեռք չի բերվել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների կողմից միջնորդվող բանակցություններում, որոնք ուղղված են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը: Շփման գծի պատահարները, Սաֆարովի գործը և Լեռնային Ղարաբաղի օդանավակայանի բացումն առաջնահերթությունը փոխել են՝ լուծում որոնելուց անցում կատարելով

լարվածությունը մեղմելուն: Ավելին, 2012 թվականի հունվարին Սոչիի գագաթնաժողովում երկու կողմերի համար ընդունելի առաջընթաց չարձանագրվեց միջադեպերի հետաքննության մեխանիզմների ուղղությամբ: Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչը երեք անգամ այցելեց տարածաշրջան՝ նպատակ հետապնդելով օժանդակել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի աշխատանքին: Մեկնարկեց ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող՝ «Եվրոպական գործընկերությունը հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» ծրագրի երկրորդ փուլը (ծրագիրն ուղղված է վստահության ամրապնդման միջոցառումների մշակմանը): Դրական տեղաշարժ չարձանագրվեց Հայաստանի և Թուրքիայի մերձեցման ուղղությամբ: ԵՄ-ն շարունակում է օժանդակել առանց նախապայմաններին մերձեցման գործընթացին:

Հայաստանն անդրադարձավ ԵՀՔ-ի առաջընթացի նախորդ տարվա զեկույցում տեղ գտած կարևորագույն առաջարկություններից մի քանիսին: Հայաստանը կազմեց ընտրական գործընթացի բարելավման «ճանապարհային քարտեզ», ընդունեց Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը և որոշ միջոցառումներ ձեռնարկեց կոռուպցիայի դեմ պայքարի, դատաիրավական համակարգի և պետական կառավարման համակարգի բարեփոխման, ինչպես նաև՝ ոլորտային բարեփոխումների և ԵՄ-ի օրենսդրության նկատմամբ կարգավորող դաշտի մոտարկման ուղղություններով: Առաջընթաց է անհրաժեշտ նաև կարևոր այլ առաջարկությունների գծով: Այս տարվա զեկույցի հիման վրա, հաշվի առնելով նաև 2013 թվականի ընթացքում ԵՀՔ-ի գործողությունների ծրագրի իրագործումը շարունակելու անհրաժեշտությունը,[1] Հայաստանի Հանրապետությանը կոչ է արվում.

- Լրացուցիչ քայլեր ձեռնարկել 2012 թվականի մայիսի խորհրդարանական և 2013 թվականի փետրվարի նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի մատնանշած թերությունների ուղղությամբ՝ ի կատար ածելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաջարկությունները, այդ թվում՝ նախագահական ընտրությունից հետո օրենսդրական դաշտում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունը:
- Լիովին հետաքննել 2008 թվականի մարտի նախագահական ընտրություններից հետո բախումների ժամանակ տեղի ունեցած մահվան դեպքերի հանգամանքները, ոստիկանությունում ազատազրկման ընթացքում դաժան վերաբերմունքի և արդար դատավարության խախտումների վերաբերյալ բողոքները:

[1] Գործողությունների ծրագիրը 2013 թվականի ընթացքում փոխարինվելու է Ասոցացման օրակարգով:

- Նոր թափ հաղորդել Մադրիդյան սկզբունքների համաձայնեցման ուղղությամբ Ադրբեջանի հետ միասին գործադրվող ջանքերին՝ Մինսկի խմբի շրջանակում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ստանձնած հանձնառություններին համահունչ:

- ԵՄ-ի ներկայացուցիչների համար Լեռնային Ղարաբաղը և հարակից շրջաններն անարգել այցելելու հնարավորություն ապահովել՝ հակամարտության վերափոխման աշխատանքներին սատարելու նպատակով, Մինսկի խմբի գործունեությունը լիովին փոխլրացնելու կարգով:

- Նպաստել հակամարտության կարգավորման առաջընթացի համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը, խրախուսել և օժանդակել խաղաղության հաստատման հարակից աշխատանքների իրականացմանը:

- Ապահովել Մարդու իրավունքների ազգային ռազմավարության իրագործումը, ձևակերպել, ընդունել և ի կատար ածել հարակից Միջոցառումների ծրագիրը:

- Հեռարձակման մասին օրենսդրության մեջ փոփոխություններ կատարել՝ ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի առաջարկություններին համահունչ, և ապահովել բազմակարծությունը հեռարձակվող լրատվամիջոցներում:

- Վերջնական տեսքի բերել «Խղճի ազատության և կրոնի մասին» օրենքի նախագիծը՝ միջազգային չափանիշներին համահունչ, ինչպես նաև՝ այլընտրանքային քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությունը՝ Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ-ի առաջարկություններին համահունչ:

- Խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենսդրություն ընդունել, այդ թվում՝ լրացուցիչ քայլեր ձեռնարկել, որոնց արդյունքում օրենսդրությունը կներդաշնակեցվի գենդերային հավասարության և խտրականության բացառման ոլորտներում ԵՄ-ի օրենսդրական կարգավորումներին:

- Խորացնել կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ գործադրվող ջանքերը, այդ թվում՝ կյանքի կոչել 2012 թվականին ընդունված օրենքները և զարգացնել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի պետական հանձնաժողովի կարողությունները, անկախությունը և թափանցիկությունը:

- Խորացնել պետական կառավարման բարեփոխումների իրագործումը, այդ թվում՝ միջոցառումներ իրականացնել իրավապահ և դատական ոլորտների բարեփոխման ուղղությամբ (մասնավորապես՝ դատական համակարգի անկախությունը և դրա նկատմամբ հանրության վստահության մակարդակը բարձրացնելու, դատավորների վերապատրաստումը

կատարելագործելու և քրեական դատավարության օրենսգիրքը վերանայելու ուղղություններով):

- Շարունակել պետական կառավարման բարեփոխումները, մասնավորապես՝ քաղաքացիական ծառայության համակարգում կարիերայի և վարձատրության՝ արժանիքների հիման վրա առաջխաղացման համակարգի ամրապնդմամբ, տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացմամբ և հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների շարունակմամբ:
- Շարունակել ոլորտային բարեփոխումների գործընթացը, առևտրի ոլորտում և առևտրին առնչվող ոլորտներում ԵՄ-ի օրենսդրական կարգավորումներին Հայաստանի իրավական դաշտը մոտարկելու գործընթացները՝ ԽՀԱԱԳ-ի ընթացող բարեփոխումներին զուգահեռ, մասնավորապես՝ սանիտարիայի և բուսասանիտարիայի միջոցառումների, առևտրի տեխնիկական խոչընդոտների, մտավոր սեփականության իրավունքների և մաքսային ոլորտներում:
- Խթանել մրցակցային տնտեսական միջավայր ապահովելու ջանքերը, այդ թվում՝ բարելավելով պայմանագրերի կիրարկումը, հեշտացնելով հարկերի վճարումը և անդրսահմանային առևտուրը:
- Աշխատել Մեծամորի ատոմակայանը հնարավորինս վաղ փակելու ուղղությամբ և ընդունել կայանի շահագործման դադարեցման մանրակրկիտ ծրագիր՝ հաշվի առնելով 2012 թվականի սթրես-տեստերի զեկույցի արդյունքները:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Խորը և մնայուն ժողովրդավարության կայացման ուղին

Հայաստանյան իշխանությունները բավական թափանցիկ և մրցակցային խորհրդարանական **ընտրություններ** անցկացրեցին 2012 թվականի մայիսին: Հայաստանում ընտրական գործընթացներին օժանդակելու՝ ԵՄ-ի ծրագիրը, որն իրագործվեց ԵԱՀԿ-ի կողմից, օգնեց ընտրական հանձնաժողովների տեխնիկական կարողությունների և ընտրությունները դիտարկելու՝ քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացմանը: Միևնույն ժամանակ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընտրադիտորդական առաքելությունը մի շարք խնդիրներ մատնանշեց, որոնք դեռևս անհրաժեշտ էր լուծել նախքան 2013 թվականի նախագահական ընտրությունը: Սեպտեմբերին Հայաստանի մարզերի մեծ մասում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ. Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակությունը դիտարկեց միայն

քվեարկության օրերի ընթացքը և չափավոր գոհունակություն հայտնեց: Դեկտեմբերին իշխող կուսակցության երկու թեկնածուներ հաղթեցին խորհրդանի լրացուցիչ ընտրություններում, սակայն նրանց ընդդիմադիր մրցակիցները դա որակեցին որպես կեղծիք: 2013 թվականի փետրվարին տեղի ունեցան նախագահական ընտրություններ. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նշեց ընտրական գործընթացի կազմակերպման և անցկացման լրացուցիչ բարելավումների, այդ թվում՝ ընտրողների ցուցակի որակի բարելավման մասին, միևնույն ժամանակ, սակայն, հաղորդումներ ներկայացնելով ընտրողների նկատմամբ ճնշումների և բազմակի քվեարկության դեպքերի մասին: Ընտրական գործընթացի նկատմամբ հանրության վստահության ցածր մակարդակը պահպանվեց:

2012 թվականին ընդհանուր առմամբ հարգվել են **արտահայտվելու ազատությունը և հավաքների ազատությունը**: Մայիսին Մարդու իրավունքների պաշտպանը և ոստիկանությունն աշխատանքային խումբ ստեղծեցին, որպեսզի ուսումնասիրեն «Հավաքների ազատության մասին» օրենքը: Առաջարկվող փոփոխություններն ուղղված են գործող օրենքի մեջ ոչ հստակ ձևակերպումների պարզաբանմանը:

Լրատվամիջոցների անկախության մակարդակը դեռևս բավարար չէ: Հեռարձակման մասին Հայաստանի օրենսդրությունը, որում մի քանի անգամ փոփոխություններ են կատարվել, շարունակել է մտահոգությունների տեղիք տալ լրատվամիջոցների բազմակարծության առումով: Հեռարձակման արտոնագրերից զրկելու հնարավորությունների իրավական հիմքերը ներկայումս չափազանց ընդգրկուն են, և դա կարող է կամայականության հանգեցնել: Իշխանությունները լրացուցիչ որևէ քայլ չեն կատարել, որպեսզի օրենսդրությունը բարելավելու միջոցով լրատվամիջոցներին համարժեքորեն պաշտպանեն զրպարտության քաղաքացիական գործերի շրջանակում հնարավոր սուբյեկտիվ քաղաքական շահարկումներից: Տպագիր լրատվամիջոցները համեմատաբար ավելի բազմազան են եղել: Որոշ առաջընթաց է արձանագրվել էլեկտրոնային լրատվամիջոցներում. Արմնյուզ հեռուստաալիքը որոշակի ժամանակ է հատկացրել ընդդիմությանն առնչվող Ա1+ հեռուստաալիքի լուրերի հեռարձակման համար (Ա1+ հեռուստաալիքը զրկվել էր հեռարձակման արտոնագրից 2002 թվականին): ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընտրադիտորդական առաքելությունը եզրակացրեց, որ քաղաքական բոլոր հիմնական կուսակցությունների համար զանգվածային լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ հասանելի են եղել:

Նախագահ Սարգսյանը հուլիսին ստորագրեց 2012-2016 թվականների **Դատաիրավական** բարեփոխումների ռազմավարական ծրագիրը: Այս ոլորտի բարեփոխումները բավարար չափով չեն լուծում դատական համակարգի անկախությանն առնչվող հիմնախնդիրները, այդ թվում՝ Արդարադատության խորհրդի (որը դատարանների ինքնակառավարման մարմին է) սահմանափակ ազդեցությունը բյուջեի ընդունման վրա, ժամանակավոր

անաշխատունակության հիմքով դատավորի լիազորությունների դադարեցումը և արդարադատության նախարարի մասնակցությունը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներին: Վճռաբեկ դատարանի աշխատանքի ոչ բավարար թափանցիկության հետևանքով Հայաստանի փաստաբանների պալատի 500 փաստաբաններ մեկօրյա աննախադեպ գործադուլ կազմակերպեցին մայիսին:

Որոշ առաջընթաց արձանագրվեց արդարադատության հասանելիության բնագավառում, մասնավորապես՝ դատարաններում գործերի պատահական բաշխման ընթացակարգի ներդրմամբ, քրեական դատավարության օրենսգրքի նախագծում անչափահասների գործերի համար արագացված մինչդատական վարույթի ներդրմամբ և քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին՝ խմբային հայցերի ներկայացման ընթացակարգ սահմանող օրենսդրական նախագծի մշակմամբ: Արդարադատության ոլորտի բարեփոխումների օժանդակության՝ ԵՄ-ի ծրագիրը Հայաստանին թույլ տվեց ավելացնել հանրային պաշտպանների թիվը՝ 32-ից հասցնելով 52-ի, որը նույնպես նպաստեց արդարադատության հասանելիության ավելացմանը: ԵՄ-ի օժանդակությամբ ստեղծվել և այժմ արդեն գործում է փաստաբանների դպրոցը: 2012 թվականին հաստատվեց արդարադատության հետագա բարեփոխումների օժանդակության՝ 20 միլիոն եվրոյի ծրագիրը՝ ԵՄ-ի ոլորտային օժանդակությամբ, որին հավելվեց ևս 9 միլիոն եվրո ԱԳԻՀԾ ծրագրի շրջանակներում:

2008 թվականի մարտի բախումների հետևանքով տեղի ունեցած՝ մահվան 10 դեպքերի հետաքննությունից դեռևս չեն ստացվել կոնկրետ արդյունքներ: ԵՄ-ին մտահոգում է նաև այն հանգամանքը, որ ոստիկանությունում ազատազրկման ընթացքում դաժան վերաբերմունքի մասին և արդար դատավարության իրավունքի խախտումների մասին բողոքները համարժեք քննության չեն արժանացել այդ իրադարձություններին հաջորդած ժամանակահատվածում: 2008 թվականի հետընտրական անհանգստությունների հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու հարցի վերաբերյալ քվեարկությունը Հայաստանի Հանրապետության ազգային ժողովում տեղի չի ունենա նախքան 2013 թվականի փետրվարի նախագահական ընտրությունը:

2012 թվականին սահմանափակ քայլեր են իրագործվել բարձրաստիճան **կոռուպցիայի** դեմ պայքարում, որի վկայությունը կոռուպցիայի հետ կապված մի քանի գործերով հետապնդման դադարեցումն է: Պետական հաստատություններում կոռուպցիայի առկայության մասին հնչեցվող բողոքները շարունակում են սասանել հանրության վստահությունը: 2012 թվականին ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք պատշաճ իրագործման դեպքում կարող են նվազեցնել կոռուպցիայի ռիսկը, ներառյալ՝ փոփոխությունները «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում, «Հանրային

ծառայության մասին» օրենքում և «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքում: Հունվարին ստեղծվեց Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի պետական հանձնաժողով: Առկա են մտահոգություններ՝ Հանձնաժողովի կարողությունների և լիազորությունների թերությունների, ինչպես նաև՝ Հանձնաժողովի գործունեության թափանցիկության առնչությամբ: Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների՝ Եվրոպայի խորհրդի խմբի («ԳՐԵԿՈ») կողմից 2012 թվականի դեկտեմբերին հրապարակվեց Հայաստանի կատարողականի գնահատման զեկույցը, որում դրական է գնահատվել օրենսդրության վերաբերյալ առաջարկությունների կատարումը: ԳՐԵԿՈ-ն եզրակացրել է, որ Հայաստանը գոհացուցիչ կերպով կատարել է Գնահատման երրորդ շրջափուլի իր զեկույցում արտացոլված 19 առաջարկություններից 16-ը՝ անդրադառնալով քրեական հետապնդման և քաղաքական կուսակցությունների ֆինանսավորմանն առնչվող խնդիրներին:

«Թրանսփարենսի ինտերնեշնլ» կազմակերպության հայաստանյան գրասենյակը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի եզրակացության մեջ հայտարարեց, որ Երևան քաղաքի կենտրոնի վերակառուցման ընթացքում տեղի է ունեցել մասշտաբային կոռուպցիա:

Սեպտեմբերին կառավարությունը փոփոխություններ կատարեց գնումների գործընթացի կառավարման մասին որոշման մեջ, որոնց նպատակն էր ավելի արդյունավետ դարձնել տեղերում կատարվող գնումները, ապահովել թափանցիկությունը և նվազեցնել կոռուպցիան ռիսկերը: Գնումների աջակցության պետական կենտրոնի պետն աշխատանքից հեռացվեց՝ այն բանից հետո, երբ զեկույցներից մեկում ներկայացվեցին գնումների գործընթացում տեղի ունեցած ապակառավարման դեպքեր: Դրական զարգացումներից էր «էլեկտրոնային վճարումների» ինտերնետային կայքի բացումը, որի նպատակն է նվազեցնել ծառայությունների վճարները և նվազագույնի հասցնել քաղաքացիական/համայնքային ծառայողների շփումը կանխիկ միջոցների հետ՝ այդկերպ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկի գործոններից մեկը: Ազգային ժողովը հոկտեմբերին քվեարկությամբ բավարարել է գլխավոր դատախազի միջնորդությունը՝ Ազգային ժողովի հայտնի անդամներից մեկին անձեռնմխելիությունից զրկելու մասին, որից հետո նա մեղադրվեց գումարներ յուրացնելու և փողերի լվացման մեջ: Գործը հնարավոր քաղաքական դրդապատճառների առկայության մասին մտահոգությունների տեղիք տվեց: «Թրանսփարենսի ինտերնեշնլ» կազմակերպության՝ կոռուպցիայի ընկալումների 2012 թվականի համաթվով աշխարհում 176 պետությունների և տարածքների մեջ զբաղեցրեց 105-րդ հորիզոնականը:

Մարդու այլ իրավունքներ և կառավարմանն առնչվող հիմնախնդիրներ

Հոկտեմբերին ստորագրմամբ՝ իրավական ակտի ուժի ստացավ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը: **Ռազմավարությունը և հարակից Միջոցառումների ծրագիրը պետք է ապահովեն** Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության **միասնական**, հասցեական և համակարգված քաղաքականության **իրագործումը**:

ԵՄ-ի ֆինանսական օժանդակությամբ ապրիլին մարզերում բացվեցին Մարդու իրավունքների պաշտպանի վեց գրասենյակները՝ ջանալով հզորացնել այս կարևորագույն կառույցի կարողությունները և բարելավել հասանելիությունը:

Հայաստանի՝ **խոշտանգումները** քրեականացնող օրենսդրությունը դժվարություն է առաջացնում, քանի որ այն համահունչ չէ ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայով նախատեսված սահմանմանը (Հայաստանում սահմանման մեջ չեն ներառվում հանրային պաշտոնյաների գործած հանցանքները, այլ՝ միայն մասնավոր անձանց կողմից մասնավոր իրավահարաբերություններում կատարված գործողությունները): Ըստ այդմ, Հայաստանում երբևէ որևէ հանրային պաշտոնյայի նկատմամբ մեղադրական դատավճիռ չի կայացվել խոշտանգման մեղադրանքով: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, ճանաչվելով որպես ազգային կանխարգելիչ մեխանիզմ ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության իմաստով, դեռևս չունի բավարար ռեսուրսներ իր գործառույթներն արդյունավետորեն կատարելու համար:

Հայաստանը որոշ ջանքեր գործադրել է **բանտերում** ազատազրկման պայմանները բարելավելու ուղղությամբ, մասնավորապես՝ որոշ հիմնարկներ վերանորոգելու և նոր բանտի կառուցման աշխատանքներ իրականացնելու առումներով: Այնուհանդերձ, դեռևս առկա են մտահոգություններ խիստ գերբնակեցվածության, կադրային թերհամալրվածության և հատկացվող սննդի և կազմակերպվող բուժօգնության անբավարարության մասին ստացվող տեղեկությունների առումով: Ցմահ ազատազրկման տեսքով պատիժ կրող բանտարկյալների վերաբերյալ արված առաջարկություններից գրեթե որևէ մեկն ի կատար չի ածվել՝ Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեի զեկույցի համաձայն:

Հանրությունը շարունակում է անհանգստանալ Հայաստանի զինված ուժերում ոչ մարտական իրավիճակներում տեղի ունեցող՝ մահվան կասկածահարույց դեպքերի առնչությամբ: Մտահոգություններ կան նաև ճնշումների և սպայական անձնակազմի և ծառայակիցների կողմից **զորակոչիկների նկատմամբ գործադրվող անընդունելի վերաբերմունքի** այլ դրսևորումների վերաբերյալ: Այդ հանցագործությունների հետաքննությունները հազվադեպ են

արդյունք տալիս: 2012 թվականին Ազգային ժողովը հաստատեց Զինված ուժերի նոր կարգապահական կանոնագիրքը, որը պետք է որ բարելավի կարգապահությունը զինվորական հաստատություններում և ապահովի զինվորների իրավունքների պաշտպանվածությունը:

Էական առաջընթաց չի արձանագրվել **կրոնի և համոզմունքի ազատության** առումով՝ թե պատշաճ օրենսդրության, թե պրակտիկայի իմաստով: Եհովայի վկաները, մասնավորապես, բողոքներ են հնչեցրել այլընտրանքային զինվորական ծառայության կարգավորումների պատճառով տուժելու վերաբերյալ. «Այլընտրանքային զինվորական ծառայության մասին» 2004 թվականին ընդունված օրենքը՝ դրանում 2006 թվականին կատարված փոփոխություններով հանդերձ, դեռևս չի երաշխավորում ակնհայտորեն քաղաքացիական բնույթ ունեցող իրական այլընտրանքային ծառայություն խղճի նկատառումներով զինվորական ծառայությանն առարկող անձանց համար: Խղճի նկատառումներով զինվորական ծառայությանն առարկող անձինք շարունակում են բանտարկվել այն դեպքում, երբ հրաժարվում են ստանդարտ զինվորական ծառայությունից կամ գոյություն ունեցող «այլընտրանքային» զինվորական ծառայությունից: Օրենքում փոփոխությունների նախագիծը, որն անդրադառնում է այս հարցին, դեռևս չի քննարկվել խորհրդարանի կողմից: Մարդու իրավունքների պաշտպանը քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցելուց հետո փոփոխություններ է առաջարկել «Խղճի ազատության և կրոնի մասին» օրենքի նախագծում, որոնց հիմնական նպատակն է օրենքի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:

Ինչ վերաբերում է **կանանց իրավունքներին**, ապա Հայաստանը դեռևս չի ընդունել ընտանեկան բռնությունը քրեականացնող օրենսդրություն: Վերջին շրջանում ստացված տեղեկությունները վկայում են այն մասին, որ արական սեռի պտղի նախընտրությամբ պայմանավորված՝ սեռային խտրականությամբ աբորտների երևույթներն աճում են: Սեռի ընտրությունն արգելող օրենսդրություն դեռևս չի ընդունվել:

Հայաստանը դեռևս չի վավերացրել **Երեխաներին** սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու վերաբերյալ Եվրոպայի խորհրդի 2007 թվականի կոնվենցիան: Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը ստեղծման պահից սկսած չի օժտվել համարժեք իրավասություններով: Ճյուղային նախարարությունները հաշվի չեն առել Գործողությունների 2004-2012 թվականների ազգային ծրագիրը: Դեռևս բավարար առաջընթաց չկա «ապաինստիտուցիոնալացման» խոստացված բարեփոխումների ուղղությամբ, չնայած որ կառավարությունը քանիցս հանձնառել է կայուն տեմպով նվազեցնել խնամքի բնակելի հաստատություններում պահվող երեխաների թիվը և զարգացնել համայնքային սոցիալական աշխատողների ցանցը: Այնուամենայնիվ,

կոնկրետ առաջընթաց է նկատվել դպրոցները բոլոր երեխաների համար ավելի հասանելի դարձնելու գործում. աստիճանաբար ավելացել է «ներառական» ճանաչված դպրոցների թիվը: Բազմաթիվ գյուղական համայնքներում բացվել են նախակրթարաններ:

Մայիսի խորհրդարանական ընտրությունների անցկացման վերաբերյալ վերջնական զեկույցում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Ընտրադիտորդական առաքելությունը նշեց, որ դիտարկված տեղամասային կենտրոնների մոտ 55%-ը դյուրամատչելի չեն եղել **հաշմանդամությամբ անձանց** համար: Հաշմանդամությամբ երեխաների համար նախատեսված ծառայությունների վերաբերյալ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետազոտությունների (2012 թ.) վերլուծությունը վկայում է, որ այդ երեխաները ծառայություններ ստանալու հարցում հանդիպում են լուրջ խոչընդոտների:

Խտրականության մասին համապարփակ օրենսդրություն դեռևս ընդունված չէ, իսկ խտրական վերաբերմունքի դրսևորումները լայնատարած են: Խտրականության ներկայիս սահմանումը խտրականության ոչ բոլոր ձևերն է ներառում (ռասա, մաշկի գույն, սեռ, լեզու, կրոն, քաղաքական կամ այլ կարծիք, ազգային կամ սոցիալական ծագում, գույք, գենդեր, սեռական կողմնորոշում կամ այլ կարգավիճակ): Ավելին, գործող օրենքների արդյունավետ կատարումը երաշխավորելու ջանքերը բավարար չեն:

Պետք է լրացուցիչ ջանքեր գործադրել՝ բացառելու խտրականությունը սոցիալական կյանքում, մասնավորապես՝ լեզբուհի, միասեռական, երկսեռ և տարասեռ համայնքի նկատմամբ: Մայիսին Երևանում գործող ակումբներից մեկում ռումբի պայթեցումը, որին հաջորդեցին Բազմազանության շքերթի խափանումը և հանդուրժողությանը նվիրված ֆիլմի դիտումների չեղյալ հայտարարումը չբացահայտված սուբյեկտների ճնշման ներքո, ինչպես նաև՝ ազդեցիկ քաղաքական գործիչների կողմից հնչեցվող անհանդուրժող հայտարարությունները, անհամատեղելի են եվրոպական արժեքներին: Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունն այս ոլորտին չի անդրադառնում:

Դեռևս անհրաժեշտ է անդրադառնալ **փոքրամասնությունների լեզուների**՝ ասորերենի, եզդիերենի, քրդերենի և հունարենի ուսուցման, դրանցով հեռարձակման և դատարանում դրանց օգտագործման խնդիրներին, չնայած Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2009 թվականին ընդունված հանձնարարականին:

ԵՄ-ն բազմիցս ընդգծել է, թե քաղաքականության ստեղծման և հաշվետու գործելակերպի համար ինչ դրական ազդեցություն կարող է ունենալ ակտիվ և շարունակական երկխոսությունը քաղաքացիական հասարակության հետ: Կառավարության և **քաղաքացիական հասարակության** միջև

համագործակցության ներկայիս շրջանակն անբավարար է: 2008 թվականին ստեղծված Հանրային խորհուրդն անարդյունավետ է և արհամարհվում է քաղաքացիական հասարակության բազմաթիվ առաջատար կազմակերպությունների կողմից: Այնուհանդերձ, քաղաքացիական հասարակության հետ սկիզբ է առել երկխոսություն մի քանի ոլորտներում՝ Արևելյան գործընկերության Ազգային պլատֆորմի աշխատանքներում ակտիվ ՀԿ-ների մասնակցությամբ: Դեկտեմբերին ԵՄ-ն հայաստանյան իշխանություններին է փոխանցել Հայաստանում Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ազգային պլատֆորմի դերի բարձրացման վերաբերյալ տեղեկանքը:

Համագործակցությունն արտաքին և անվտանգության քաղաքականության, հակամարտությունների կանխարգելման և վստահության ամրապնդման ոլորտներում

2012 թվականին ԵՄ-ն Հայաստանին առաջարկել է միանալ ԵՄ-ի արտաքին և անվտանգության ընդհանուր քաղաքականության 62 հայտարարությունների, որոնցից Հայաստանը միացել է 35-ին (2011 թվականին Հայաստանը առաջարկված 82-ից միացել է 40-ին): Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման ուղղությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցությունների տեմպը դանդաղել է: Հայաստանի և Ադրբեջանի նախագահները Սոչիի հունվարի հանդիպումից հետո կրկին չեն հանդիպել: Արտաքին գործերի նախարարները ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների ձևաչափում հանդիպումները հիմնականում սահմանափակում են դիրքորոշումների մերձեցման վերաբերյալ առանձին բանակցություններով:

Անվտանգության իրավիճակի տատանողականությունը պահպանվել է: Հունիսին լուրջ լարվածություն է արձանագրվել հայ-ադրբեջանական սահմանին. ստացված տեղեկությունների համաձայն, սպանվել են առնվազն ութ զինծառայողներ: Դա համընկավ ԱՄՆ-ի պետական քարտուղար Հիլարի Քլինթոնի տարածաշրջանային այցի հետ:

Երկկողմ հարաբերությունների վերջին դինամիկան բացասաբար է ազդում կողմերի միջև վստահության վրա և հակադրվում մինչ այդ արված աշխատանքի հիման վրա հիմնարար սկզբունքների համաձայնեցումն արագացնելու վերաբերյալ Նախագահների կողմից 2012 թվականի սկզբին արտահայտած պատրաստակամությանը: Ուստի, ԵՄ-ն բազմիցս կոչ է արել՝ զսպվածություն դրսևորելու գործողություններում և հրապարակային հայտարարություններում՝ արդեն իսկ բարդ իրավիճակի հետագա սրումից խուսափելու նպատակով:

Սեպտեմբերին մեկնարկեց քաղաքացիական հասարակության համար ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող՝ «Եվրոպական գործընկերությունը հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» ծրագրի

երկրորդ փուլը: Դրա նպատակն է օժանդակել խաղաղության կերտման ջանքերին՝ դյուրացնելով երկխոսությունը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, զանգվածային լրատվամիջոցների և քաղաքականություն ստեղծողների միջև:

Հայաստանի և Թուրքիայի մերձեցման հարցում դրական զարգացումներ տեղի չունեցան: ԵՄ-ն շարունակում է օժանդակել առանց նախապայմանների գործընթացին:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Մակրոտնտեսական շրջանակը և արդյունավետ շուկայական տնտեսությունը[2]

ՀՆԱ-ի աճն արագացավ՝ 2012 թվականին հասնելով 7.2%-ի, որի հիմնական շարժիչ ուժն էր մասնավոր սպառման և արտահանումների աճը, չնայած որ ներդրումները շարունակեցին նվազել: Տնտեսական ակտիվության աճ գրանցվեց հանքարդյունաբերության, գյուղատնտեսության, ծառայությունների և շինարարության ոլորտներում:

Գնաճի չափավոր ցուցանիշը պահպանվեց: 2012 թվականի մայիսին 0.5%-ի հասնելուց հետո այն մի փոքր ավելացավ՝ պայմանավորվելով էներգակիրների միջազգային գների աճով: Միջին գնաճը 2012 թվականին կազմել է 2.6%, և ակնկալվում է, որ այն մոտակա տարիներին պահպանվելու է Հայաստանի կենտրոնական բանկի 4% ± 1.5 տոկոսային կետի թիրախային միջակայքում: Կենտրոնական բանկը քաղաքականության տոկոսադրույքը 2011 թվականի սեպտեմբերից սկսած պահել է կայուն՝ 8%:

Հարկաբյուջետային դիրքը շարունակել է բարելավվել: Ակնկալվում է, որ բյուջեի պակասուրդը կնվազի 2012 թվականին հասնելով ՀՆԱ-ի 2%-ի: Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալներով, ակնկալվում է, որ պետական պարտքը 2012 թվականի տարեվերջին կհասնի ՀՆԱ-ի 45%-ի: Պարտքի մոտ 90%-ն արտաքին է և խոցելի է փոխարժեքի փոփոխությունների նկատմամբ:

Ակնկալվում է, որ **ընթացիկ հաշվի** պակասուրդը 2012 թվականին կմնա ՀՆԱ-ի 10%-ից բարձր:: Արտերկրից փոխանցումները 2012 թվականի առաջին երեք եռամսյակներին աճել են 7%-ով՝ 2011-ի 24.5%-ի համեմատությամբ:

---

[2] ՀՆԱ, գնաճի, առևտրի և զբաղվածության մասին տվյալները վերցված են Եվրոստատից՝հիմնվելով ազգային վիճակագրական ծառայությունների կողմից տրված տվյալների կամ ԱՄՀ կամ Հանձնաժողովի աշխատակազմի հաշվարկներից վրա, ինչպես նշված է Վիճակագրական հավելվածում: Տվյալների այլ աղբյուրների օգտագործման պարագայում հատուկ նշում է կատարված:

Արտահանումը նույն ժամանակաշրջանում աճել է 5.1%-ով (2011 թվականին՝ 32.8%-ով): Օտարերկրյա ուղղակի ներդրումները 2012 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում 23.5%-ով զիջել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին: Ակնկալվում է, որ արտաքին պահուստները կնվազեն՝ 2012-ին հասնելով 3.6 ամսվա արտահանումների մակարդակին (2011 թվականի 4.6 ամսվա արտահանումների ցուցանիշի համեմատությամբ)՝ պայմանավորված փոխարժեքի տատանումները մեղմելու նպատակով Հայաստանի կենտրոնական բանկի կողմից կատարվող միջամտություններով:

Տնտեսությանն օժանդակություն է ցուցաբերվել Արժույթի միջազգային հիմնադրամի ֆինանսական ծրագրի շրջանակում, որն ավարտվելու է 2013 թվականի կեսերին, ինչպես նաև՝ դոնորական բացառիկ աջակցության տեսքով: Արժույթի միջազգային հիմնադրամը դիտարկում է այլ դոնորների հետ միասին աջակցության նոր ծրագրեր, ներառյալ՝ ԵՄ-ի հետ միասին մակրոֆինանսական աջակցության նոր ծրագիր իրականացնելու նպատակահարմարությունը:

Սոցիալական իրավիճակը, զբաղվածությունը և աղքատության կրճատումը

Գործազրկության տարեկան ցուցանիշի նվազում է ակնկալվում՝ 2011 թվականի 18.4%-ից 2012-ին հասնելով 15%-ի: Ազգային տվյալները վկայում են, որ զբաղվածության ցուցանիշը մնացել է կայուն՝ 62.9% (սեպտեմբերին), մինչդեռ երիտասարդների գործազրկության մակարդակը մնացել է շատ բարձր՝ 39.2%: Սոցիալական ներառման ցուցանիշը մնացել է շատ ցածր: Հայաստանի բնակչության մոտ 55%-ն ակտիվորեն ներգրավված չէ սոցիալական և հասարակական գործընթացներին: Ներգրավվածության մակարդակն էլ ավելի ցածր է մարզերում (Հայաստանում սոցիալական ներառման վերաբերյալ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի վերջին՝ 2011 թվականի տվյալների համաձայն):

Ֆինանսական ճգնաժամը մասամբ ի չիք դարձրեց կենսամակարդակի բարելավման և աղքատության հաղթահարման առումներով Հայաստանի վերջին շրջանի ձեռքբերումները: Բնակչության մոտ 36%-ը ներկայումս ապրում է **աղքատության** շեմից ցածր պայմաններում. հատկապես խոցելի են երեխաները: Չորս և ավելի երեխա ունեցող ընտանիքների ավելի քան 70%-ն ապրում են աղքատության պայմաններում: Տնտեսական ճգնաժամն էապես ազդել է աշխատավարձերի վրա. նվազագույն աշխատավարձը 2012-ին կազմել է 32,000 դրամ (մոտ 64 եվրո):

Կառավարությունը հուլիսին հաստատել է ինտեգրված **սոցիալական ծառայությունների** ռազմավարությունը, որով նախատեսվում է սոցիալական

աշխատողների ինստիտուտը: Մեկնարկել է փորձնական ծրագիր Արարատի մարզում: Հայաստանում լրացուցիչ օրենսդրություն է ընդունվել՝ ի նախապատրաստումն 2014 թվականից կենսաթոշակային նոր համակարգի ներդրմանը: Աղքատության հաղթահարման Կայուն զարգացման ծրագիրը մնացել է կասեցված վիճակում՝ պայմանավորված տնտեսական ճգնաժամով: 2012-ի տարեվերջին նախաձեռնվել է այդ ծրագրի վերանայման գործընթացը: ԵՄ-ն սկսել է նախապատրաստել Հայաստանի տարածքների զարգացման օժանդակության ծրագիր, որն ուղղված է լինելու միջմարզային սոցիալ-տնտեսական տարբերությունների նվազեցմանը:

Նոյեմբերին Հայաստանն ընդունել է Զբաղվածության ազգային ռազմավարությունը և 2013-2018 թվականների գործողությունների ծրագիրը, որ ներառում է զբաղվածության քաղաքականության ոլորտի միջնաժամկետ հատվածի խնդիրները և դրանք իրագործելու մի շարք միջոցառումներ:

Գյուղատնտեսության ոլորտում ԵՄ-ն և Հայաստանը 2012 թվականի հունիսին սկսել են բանակցությունները ԽՀԱԱԳ-ի շրջանակում Աշխարհագրական տեղանունների պաշտպանության վերաբերյալ:

4. ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ՇՈՒԿԱՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

ԵՄ-ն Հայաստանի արտաքին առևտրի հիմնական գործընկերն է. 2011 թվականին ԵՄ-ին է բաժին ընկել Հայաստանի արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 32.5%-ը:[3] **Երկկողմ արտաքին առևտրի** հոսքերը նվազել են՝ 2012 թվականին առաջին 11 ամիսներին կազմելով 874 միլիոն եվրո: ԵՄ-ի արտահանումները Հայաստան հիմնականում բաղկացած են եղել մեխանիկական սարքավորումներից, թանկարժեք մետաղներից և էլեկտրական մեքանաներից: Հայաստանից ԵՄ ներմուծումները հիմնականում բաղկացած են եղել բազային մետաղներից (պղինձ, երկաթ և պողպատ) և հանքահումքային արտադրանքից (հանքանյութ և հանքաքար):

2012 փետրվարին ԵՄ-ն որոշեց մեկնարկել Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու («ԽՀԱԱԳ») բանակցությունները Հայաստանի հետ: Այդ գործընթացի մեկնարկը պայմանավորվեց նախապատրաստական փուլում Հայաստանի արձանագրած էական առաջընթացով և անհրաժեշտ բոլոր պահանջները բավարարելու ուղղությամբ Հայաստանի կողմից գործադրվող լուրջ ջանքերով: Բանակցությունների երեք փուլեր ավարտին հասցվեցին 2012 թվականին՝ վկայելով այդ բանակցություններում առաջ ընթանալու՝ Հայաստանի ակնհայտ պատրաստակամության և կամքի մասին: Հայաստանը զուգահեռաբար շարունակեց ԽՀԱԱԳ-ի հետ կապված հետևյալ հիմնական

[3] Սույն փաստաթուղթը գրելու ժամանակ առկա չէին 2012 թվականի տվյալները:

առաջարկությունները կյանքի կոչող ներպետական բարեփոխումների գործընթացը:

Մաքսային վճարների և ակցիզների ոլորտում «Ակցիզային հարկի մասին» օրենքում փոփոխությունները թույլ տվեցին ալկոհոլային խմիչքի ակցիզային դրոշմանիշները փակցնել մաքսային հսկողության ներքո: Լրացուցիչ բարեփոխումներ են անհրաժեշտ մաքսային արժեքի որոշման, հետմաքսազերծումային հսկողության և ծագման հավաստագրման ոլորտներում: Հայաստանը պետք է Մաքսային օրենսգիրքն աստիճանաբար ավելի շատ ներդաշնակեցնի Համայնքի մաքսային օրենսգրքին:

Ապրանքների ազատ տեղաշարժի և **առևտրի տեխնիկական խոչընդոտների բնագավառում** Հայաստանը 2012 թվականի փետրվարին ընդունել է չորս հիմնարար օրենքներ տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, հավատարմագրման և չափագրումների միասնականության մասին: Նախապատրաստվում էին կատարումն ապահովող լրացուցիչ իրավական ակտեր՝ ի լրումն վերոհիշյալ օրենքներին, մասնավորապես՝ օրենք շուկայի ուսումնասիրությունների մասին, օրենք ապրանքների ընդհանուր անվտանգության մասին և օրենք խոտան ապրանքների համար պատասխանատվության մասին: Հայաստանը օրենքների կատարումն ապահովող իրավական ակտեր է մշակել ստանդարտացման և հավատարմագրման մարմինները ԵՄ-ի գործելակերպին համահունչ բարեփոխելու համար: Ինչ վերաբերում է ԵՄ-ի օրենսդրությանը մոտարկվելու՝ կառավարության ծրագրին, ապա առաջընթաց է արձանագրվել խաղալիքների անվտանգության բնագավառում (օրենքի նախագիծ է մշակվել), մինչդեռ առաջնահերթ այլ ոլորտները մոտարկումը սկսելու են 2013 թվակին. մինչ այդ, պետք է առանձնացնել առաջնահերթ նոր ոլորտներ:

Բացերի վերլուծությունից հետո Հայաստանն ընդունել է **սանիտարիայի և բուսասանիտարիայի** («ՍԲՍ») ոլորտում ԵՄ-ի չափանիշներին մոտարկվելու ծրագիր: Հայաստանը զարգացրել է Սննդի անվտանգության պետական ծառայության կարողությունները: Սննդի անվտանգության պետական ծառայության շրջանակներում ստեղծվել է կենդանական սանիտարիայի և բուսական սանիտարիայի լաբորատոր ծառայությունների կենտրոն: Մշակվել է նրա մասնաճյուղերի կարողությունների զարգացման ծրագիրը: Սննդի անվտանգության ռազմավարության և Գործողությունների ծրագրի իրագործումը շարունակվել է, մասնավորապես՝ փոփոխություններ են կատարվել սննդամթերքի անվտանգության մասին օրենքում: ՍԲՍ փորձագետների վերապատրաստումը շարունակվել է, այդ թվում՝ TAIEX օժանդակությամբ: Հայաստանին կոչ է արվում՝ շարունակելու մոտարկումը և լաբորատոր կարողությունների հետագա հզորացումը:

Հայաստանում **գործարարության միջավայրի** վրա շարունակում են բացասաբար անդրադառնալ կոռուպցիան և արդյունավետ մրցակցության բացակայությունը: Իրավիճակը բարելավվել է էլեկտրաէներգիա ստանալու, ներդրողների պաշտպանվածության և ընկերությունների գրանցման վճարները վերացնելու առումներով: Հայաստանը Համաշխարհային բանկի 2013 թվականի «Doing Business» ուսումնասիրության ամենամյա զեկույցի տվյալներով գործարար գործունեություն ծավալելու դյուրինության առումով 185 պետությունների շարքում բարձրացել է 32-րդ հորիզոնականը: Հայաստանը Աշխարհում տնտեսական ազատությունների 2012 թվականի զեկույցում դասակարգվել է 35-րդը՝ բարելավում արձանագրելով միջազգային առևտուր իրականացնելու ազատության ցուցանիշի առումով: Պայմանագրերի կիրարկման, հարկեր վճարելու հեշտության և անդրսահմանային առևտրի բարելավումները կարող են օգնել՝ լրացուցիչ ներդրումներ ներգրավելու դեպի Հայաստան:

Ինչ վերաբերում է **ֆինանսական ծառայությունների** ոլորտին, ապա Հայաստանը մշակել է հայեցակարգի նախագիծ բանկային կապիտալի և իրացվելիության կարգավորումը բարելավելու հիմնական առաջարկությունների հիման վրա (որոնք սահմանվել են Բազել-III-ի կողմից): Միջոցառումներ են ձեռնարկվել «Վճարունակություն II» համակարգը ներդնելու ուղղությամբ: Հաշվապահական հաշվառման մասին և փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) ֆինանսական հաշվետվողականությունը միջազգային չափանիշներին ներդաշնակեցնելու մասին օրենքի նախագիծն ուղարկվել է խորհրդարան: Հետագայում իրավական դրույթները կյանքի կոչելու ջանքերը կենսական կարևորություն կունենան այս ոլորտի բարեփոխումների համար: **Կապիտալի տեղաշարժի** կարգավորումը 2012 թվականին էական փոփոխությունների չի ենթարկվել:

Կարևոր այլ ոլորտներ

Հայաստանը ՏՀԶԿ-ի ուղենիշներով առաջնորդվելով ընդունել է **հարկային** քաղաքականության 2013–15 թթ. ռազմավարությունը և հարկային վարչարարության 2012–14 թթ. ռազմավարությունը, որն ուղղված է էլեկտրոնային հաշվետվողականության շրջանակի ընդլայնմանը: 2013 թվականի հունվարից ուժի մեջ է մտել նոր պարտադիր եկամտահարկը, որում միավորվել են սոցիալական ապահովության մասհանումները և մասնավոր ապահովագրական վճարները: Հայաստանը նաև հատուկ համակարգչային ծրագրեր է ներդրել, որոնցով միասնականացրել է հարկային և մաքսային տեղեկատվությունը: 2012 թվականի բյուջեով նախատեսված՝ հարկային եկամուտների զգալի ավելացումը խիստ կարևոր էր կառավարության ծախսերն ավելացնելու և միևնույն ժամանակ բյուջեի պակասուրդը կրճատելու տեսանկյունից: Գործողությունների ծրագրի կատարումն ապահովելու համար Հայաստանին կոչ է արվում լրացուցիչ բարեփոխումներ իրագործել հարկային

վարչարարության, ինչպես նաև՝ հարկային քաղաքականության և օրենսդրության մեջ:

Առաջընթաց չի արձանագրվել **մրցակցության** բնագավառում: Մրցակցության մասին օրենքի փոփոխությունները և **պետական օժանդակության** մասին օրենքի նախագիծը ներկայացվել են կառավարությանը, սակայն հետ են ուղարկվել լրամշակման: Պետական օժանդակության մասին նոր օրենքի կատարումն ապահովելու համար անհրաժեշտ չորս ենթաօրենսդրական ակտերը նույնպես մշակվել են: Ընդունվելու դեպքում դրանք կապահովեն օրենսդրության լիարժեք ներդաշնակեցումը ԵՄ-ի սկզբունքներին: Դրանց արդյունավետ իրագործման համար, սակայն, համապատասխան ռեսուրսներ և հետաքննողական լիազորություններ պետք կգան մրցակցության պաշտպանության մարմնին: Մրցակցության մասին օրենքի փոփոխությունները նախատեսված են Հայաստանի 2012 թվականի Առաջնահերթ գործողությունների ծրագրով:

Մտավոր սեփականության իրավունքների («ՄՍԻ») պաշտպանության նոր ստորաբաժանում է ստեղծվել մաքսային ծառայությունում, որը պետք է զբաղվի ՄՍԻ-ն խախտող ապրանքների նկատմամբ մաքսային գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ իրավատերերի դիմումների քննությամբ. նշվածն այս ոլորտում առաջընթացի վկայություն է: Հայաստանը մայիսին ստեղծել է Առևտրային նշանների ասոցիացիա՝ ՄՍԻ համակարգի մասին իրազեկությունը և իրավապաշտպանությունը բարելավելու նպատակով: Հաջորդ դրական զարգացումը կոլեկտիվ կառավարման «Հայհեղինակ» կազմակերպության կարգավիճակի փոփոխությունն է, որը հեղինակների իրավունքներից և կազմակերպության պարտավորություններից զատ այժմ զբաղվում է նաև հարակից իրավունքներով: Հայաստանը մշակում է ՄՍԻ-ի պաշտպանության մասին իրավական նորմեր, որոնք ներառվելու են համապատասխան օրենսգրքերում: Հայաստանը մշակում է նաև հեղինակային իրավունքների մասին նոր օրենք: ՄՍԻ-ի բարեփոխումների հետագա իրագործումը խթանելու նպատակով անհրաժեշտ է զարգացնել վարչական կարողությունները. խորհուրդ է տրվում նաև ստեղծել ՄՍԻ-ի պաշտպանության կենտրոն: Թվինինգային ծրագրի շրջանակներում ներկայումս օժանդակություն է ցուցաբերվում Հայաստանին քաղաքականությունն իրագործելու կարողությունները զարգացնելու և ՄՍԻ-ի պաշտպանության և կիրարկման ոլորտներում ԵՄ-ի լավագույնը փորձը և միջազգային չափանիշները ներդնելու գործում: Նոր բուսատեսակների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի վավերացումը և անդամակցությունը Պատենտային իրավունքի մասին համաձայնագրին և Առևտրային նշանների իրավունքի մասին համաձայնագրին դեռևս ապահովված չեն:

Ակնկալվում է, որ պետական բոլոր բաց գնումները 2012 հունվարից սկսած իրականացվելու են **էլեկտրոնային գնումների** եղանակով: Այնուհանդերձ, կան տեխնիկական դժվարություններ, որոնք խոչընդոտում են նոր համակարգի լիարժեք ներդրումը:

Վիճակագրության բնագավառում Հայաստանը հրապարակել է բնակչության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքները (վերջնական արդյունքներն ակնկալվում են 2013 թվականի տարեվերջին): Իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ գյուղատնտեսական համատարած հաշվառման համար. փորձնական հաշվառումը նախատեսվում է անցկացնել 2013 թվականին: Հայաստանը զգալի առաջընթաց է կատարել միջազգային այնպիսի դասակարգումների ներդրման գործում, ինչպիսիք են «NACE Rev.2»-ը (տնտեսական գործունեության դասակարգում) և «COICOP»-ը (անհատական սպառման դասակարգում ըստ նպատակի): Վիճակագրական տվյալների նոր՝ դյուրօգտագործելի ինտերնետային կայք է ստեղծվել հասարակայնության համար: Զգալի առաջընթաց է արձանագրվել մետատվյալների զարգացման ոլորտում: Հայաստանը սկսել է ազգային օրենսդրությունը մոտարկել տվյալների անվտանգության և վիճակագրական գաղտնիության մասին ԵՄ-ի իրավական կարգավորումներին:

2012 թվականին էական առաջընթաց չի նկատվել **ձեռնարկատիրության քաղաքականության** ոլորտում՝ վերջին տարիներին իրականացված ապակարգավորման ընդգրկուն նախաձեռնություններից հետո: Կառավարությունը ՓՄՁ-ների զարգացումը համարում է ռազմավարական գերակայություն, սակայն ոլորտին դեռևս անհրաժեշտ է զարգացման հզոր և տեսանելի ռազմավարություն, ինչպես նաև՝ քաղաքականության իրագործման մեխանիզմներ, ինչպես նաև՝ կարգավորիչ ազդեցության գնահատման իրավական դաշտի արդյունավետ կատարում: ԵՄ-ն շարունակում է օժանդակել ՓՄՁ-ներին այնպիսի ծրագրերի միջոցով, ինչպիսիք են «East-Invest»-ը և «Small Business Support»-ը:

Հայաստանում փոփոխվել են թափանցիկությանն առնչվող իրավական կարգավորումները՝ նպատակ ունենալով ապահովել մանրածախ ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների ստանդարտացումը և ներդաշնակեցումը՝ **սպառողների պաշտպանությունը** բարելավելու նպատակով:

Պետական ներքին ֆինանսական վերահսկողության բնագավառում հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների՝ կառավարության ռազմավարության իրագործմամբ պետական մարմիններում ներքին աուդիտի գործառույթ կատարող ստորաբաժանումների թիվը հասել է 52-ի՝ ի լրումն Երևանի քաղաքապետարանի և 46 քաղաքային համայնքների: Համապատասխան ուսուցումներն ընթացքի մեջ են:

էական առաջընթաց չի արձանագրվել **ընկերությունների օրենսդրության** ոլորտում, այդ թվում՝ **հաշվապահական հաշվառման և աուդիտի**, ինչպես նաև՝ **արտաքին աուդիտի** բնագավառներում:

ԵՄ-ն շարունակել է զգալի օժանդակություն ցուցաբերել առևտրի հետ կապված բարեփոխումներին՝ բյուջետային օժանդակության, ԵՄ-ի խորհրդատվական խմբի, ինստիտուտների հզորացման համապարփակ ծրագրի («CIB»), տեխնիկական աջակցության, TAIEX-ի և թվինինգի միջոցով (մտավոր սեփականության իրավունքների, ՍԲՍ-ի, շուկաների ուսումնասիրությունների, մրցակցության և պետական օժանդակության, վիճակագրության և մաքսային և այլ ոլորտներում): 2011-2013 թվականների («NIP II») բազմամյա ծրագրային բյուջեից ցուցաբերվող ոլորտային բյուջետային օժանդակությունը հիմնականում կենտրոնանում է ԽՀԱԱԳ-ի բարեփոխումների ուղղությամբ:

5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

2012 թվականի սկզբներին Հայաստանում ստեղծվեց ԵՄ-ի և Հայաստանի միջև 2011 թվականի հոկտեմբերին ստորագրված՝ **Մարդկանց տեղաշարժի ոլորտում գործընկերության** («Mobility Partnership»), ինչպես նաև՝ **Միգրացիայի** ոլորտում միջոցառումների ազգային ծրագրի համակարգման, իրագործման և մշտադիտարկման հարցերով պատասխանատու միջգերատեսչական հանձնաժողով: Միգրացիոն հոսքերի վերաբերյալ տեղեկատվական համակարգը շահեկան կլիներ ծրագիրն իրագործելու համար: ԵՄ-ն մեծածավալ օժանդակություն է ցուցաբերում Հայաստանում միգրացիայի և մարդկանց տեղաշարժի ոլորտներին՝ ոլորտային քաղաքականության բարեփոխումների, ԵՄ-ի խորհրդատվական խմբի, մի շարք թեմատիկ ծրագրերի, թվինինգի և ինստիտուտների հզորացման համապարփակ ծրագրի («CIB») միջոցով: 2012 թվականի դեկտեմբերին ստորագրվել է ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող՝ Մարդկանց տեղաշարժի ոլորտում գործընկերության օժանդակության «Միգրացիայի կառավարման կարողությունների հզորացումը Հայաստանում» ծրագիրը, որը հատկապես միտված է ԵՄ-ի և Հայաստանի միջև Մարդկանց տեղաշարժի ոլորտում գործընկերության շրջանակում վերահինտեգրման աշխատանքների կազմակերպմանը: TAIEX-ի շրջանակներում տեղի են ունեցել ուսումնական այցելություններ և փորձագիտական առաքելություններ՝ նվիրված **ապաստանի** ընթացակարգերի համապատասխանությանը ԵՄ-ի չափանիշներին:

Վիզաների դյուրացման և **հետընդունման** համաձայնագրերի բանակցությունները, որոնք ԵՄ-ի և Հայաստանի միջև մեկնարկել են 2012 թվականի փետրվարին, իրականացվել են արագընթաց կերպով: Կողմերը

վերոհիշյալ երկու համաձայնագրերը նախաստորագրել են հոկտեմբերին: Վիզաների դյուրացման համաձայնագիրը ստորագրվել է դեկտեմբերի 17-ին: Կառավարությունը հոկտեմբերին հաստատել է որոշում, որով 2013 թվականի հունվարից վերացվելու է մուտքի վիզայի պահանջը ԵՄ-ի քաղաքացիների համար: Հունիսից Հայաստանը սկսել է կենսաչափական անձնագրեր տրամադրել իր քաղաքացիներին:

Կառավարությունը սկսել է իրականացնել Հայաստանի և Վրաստանի սահմանի Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի անցման կետերը Սահմանների ինտեգրված կառավարման («IBM») չափանիշներին համահունչ արդիականացնելու հավակնոտ ծրագիրը (մոտ 61 միլիոն եվրո արժողությամբ): Հաստատվել է ԵՄ-ի Հարևանության ներդրումների ծրագրի 12 միլիոն եվրոյի դրամաշնորհը՝ Եվրոպական ներդրումների բանկի և ՎԶԵԲ-ի վարկերի համադրությամբ: Լրացուցիչ օժանդակություն է ցուցաբերվել Արևելյան գործընկերության Սահմանների ինտեգրված կառավարման ծրագրի միջոցով: Փետրվարին Հայաստանը և «FRONTEX»-ն աշխատանքային հուշագիր են ստորագրել:

Եվրոպայի խորհուրդը հրապարակել է **մարդկանց թրաֆիքինգի** վերաբերյալ Հայաստանի գնահատման առաջին զեկույցը, որում ողջունել է գործադրվող ջանքերը՝ միաժամանակ նաև նշելով, որ անհրաժեշտ է բարձրացնել խոցելի խմբերի իրազեկության մակարդակը և բարելավել տուժողների հայտնաբերումը:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ազգային ծրագիրը հաստատվել է ապրիլին: Ընդունվել է դրա իրագործման միջոցառումների ժամանակացույցը: Հայաստանն ընդունել է **փողերի լվացման** և ահաբեկչության ֆինանսավորման մասին նոր ռազմավարություն: Խաղային բիզնեսը փողերի լվացման դեմ պայքարի տեսանկյունից արտոնագրելու և վերահսկելու նպատակով պատրաստվել են օրենսդրական փոփոխություններ: Փոփոխություններն ուղղված են այդ գործունեությանը ներքաշված ոչ միայն ֆիզիկական, այլ նաև՝ իրավաբանական անձանց պատժելուն:

Հայաստանը պետք է շարունակի **թմրամոլության** և թմրադեղերի անօրինական շրջանառության դեմ պայքարի ծրագրի իրագործուը: Հայաստանը հոկտեմբերին վերահաստատել է Թմրադեղերի և թմրամոլության մոնիթորինգի եվրոպական կենտրոնի հետ սերտ համագործակցություն հաստատելու պատրաստակամությունը:

Արտակարգ իրավիճակների նախարարությունը ստեղծել է ճգնաժամային կառավարման 24 ժամ գործող կենտրոն, որի նպատակն է ապահովել արդյունավետ միջգերատեսչական համագործակցությունը ճգնաժամերի կառավարման գործում, այդ թվում՝ արձագանքն **ահաբեկչությանը**:

Ինչ վերաբերում է **ոստիկանության և դատական համագործակցության** բնագավառին, ապա Արևելյան գործընկերության պետությունների իրավապահ մարմինները հանդիպել են Երևանում ապրիլին՝ կիբեռհանցավորության դեմ պայքարի՝ ԵՄ-ի և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրի շրջանակներում: Դեռևս վերջնական տեսքի բերված չէ ոստիկանության բարեփոխումների 2012-2014 թթ. ծրագիրը:

Հայաստանը պետք է շարունակի անօրինական **թմրադեղերի** դեմ պայքարի ծրագրի իրագործումը: Հայաստանը հոկտեմբերին վերահաստատել է Թմրադեղերի և թմրամոլության մոնիթորինգի եվրոպական կենտրոնի հետ սերտ համագործակցություն հաստատելու պատրաստակամությունը:

Հայաստանը մայիսին վավերացրել է **Անձնական տվյալների** ավտոմատ մշակման առնչությամբ անհատների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան և վերջինիս լրացուցիչ արձանագրությունը:

6. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը որոշ առաջընթաց է արձանագրել **տրանսպորտի** ոլորտում ԵՄ-ի կանոններին և միջազգային կանոններին մոտարկվելու հարցում: Քայլեր են ձեռնարկվել Վտանգավոր ապրանքների ցամաքային ճանապարհով միջազգային փոխադրման մասին եվրոպական համաձայնագրին և Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին կոնվենցիային միանալու ուղղությամբ: Հայաստանը 2012 թվականին փոփոխություններ է կատարել ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները կարգավորող օրենսդրության մեջ՝ խստացնելով խախտումների համար վարորդների պատասխանատվությունը: Հայաստանը ճանապարհների անվտանգության բարելավման քաղաքականություն է իրականացրել, սակայն պատահարների ցուցանիշը շատ բարձր է մնում՝ ԵՄ-ի միջինի համեմատությամբ: Արևելյան գործընկերության 2012-13 թթ. «Ճանապարհային քարտեզը» ներառում է Արևելյան գործընկերության պետությունների հետ Ավիացիայի ընդհանուր տարածքի համաձայնագրեր բանակցելու նպատակը: Այդ նպատակի իրագործումը կախված է լինելու Հայաստանի պատրաստակամությունից և հետաքրքրվածությունից: Հայաստանը ԵՄ-ի օժանդակությամբ էլ ավելի է առաջ ընթացել ավիացիոն անվտանգության մասին ԵՄ-ի օրենսդրությանը մոտարկվելու ուղղությամբ: Ենթակառուցվածքի զարգացման ոլորտում Հայաստանը ջանքերը կենտրոնացրել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ուղղությամբ: Հարևանության ներդրումների ծրագրի միջոցով ԵՄ-ն օգնել է Հայաստանին՝ արդիականացնելու Վրաստանի հետ սահմանի՝ ցամաքային տրանսպորտային միջոցների հատման կետերը:

Հայաստանը շարունակել է աշխատել **էներգետիկայի** ոլորտի ռազմավարությունը թարմացնելու ուղղությամբ: Հայաստանն ակտիվ դիտորդ է Էներգիայի համայնքի շրջանակներում: Առաջնորդվելով էներգետիկ անվտանգության նկատառումներով, Հայաստանը որոշել է երկարաձգել Մեծամորի ատոմակայանի երկրորդ բլոկի շահագործումը մինչը նոր բլոկի գործունեության մեկնարկը: Շարունակվել են Մեծամորի տարածքում նոր ատոմակայանի շինարարությանն ուղղված նախապատրաստական աշխատանքները՝ նպատակ ունենալով շինարարությունը սկսել 2013 թվականից: ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրին համահունչ, ԵՄ-ն շարունակում է կոչ անել, որպեսզի Մեծամորի կայանը հնարավորինս շուտ փակվի, քանի որ այն չի կարող արդիականացվել այնպես, որպեսզի համապատասխանի միջուկային անվտանգության միջազգայնորեն ճանաչված չափանիշներին: Հայաստանին կոչ է արվում Մեծամորի գործունեության դադարեցման մանրակրկիտ ծրագիր կազմել և ընդունել ռադիոակտիվ թափոնների մասին ռազմավարություն:

Հայաստանը ջանքեր է գործադրել Մեծամորի ապահովության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Հայաստանը նաև կայանի ռիսկերի և անվտանգության համապարփակ գնահատում («սթրես-տեստ») է իրականացնում ԵՄ-ի տեխնիկական օժանդակությամբ: Փոքր ՀԷԿ-երի կողմից էլեկտրաէներգիայի արտադրությունն ավելացել է: Հայաստանին կոչ է արվում՝ ավելացնելու էներգախնայողության ոլորտում գործադրվող ջանքերը: Հայաստանը շարունակել է Աբովյանում գտնվող՝ գազի ստորգետնյա պահեստի արդիականացման աշխատանքները: Հայաստանը պլանավորում է էլեկտրաէներգիայի հյուսիս-հարավ ցանց ստեղծել հարևանների հետ: Վրաստանի հետ էլեկտրաէներգիայի ցանցի փոխկապակցման տեխնիկատնտեսական հիմնավորվածության ուսումնասիրությունն ընթացքի մեջ է: Իրանի հետ նմանօրինակ ցանցի շինարարությունն արդեն սկսվել է:

Կլիմայի փոփոխությունների բնագավառում Հայաստանը հայտարարել է, որ կամավոր միջոցառումներ է իրականացնելու «ջերմոցային» գազերի արտանետումները սահմանափակելու ուղղությամբ: Բնակարանաշինության մեջ էներգախնայողության, ինչպես նաև՝ կլիմայի փոփոխությունների հետևանքները մեղմելու թեմաներով սեմինարներ են անցկացվել տարվա ընթացքում: Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը («REC-C») շարունակել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագիր իրականացնել՝ ուղղված կլիմայի փոփոխությունների նկատմամբ հարմարվողականությանը: Հայաստանը մասնակցել է ԵՄ-ի «Clima East» սպասվող տարածաշրջանային ծրագրի (18 միլիոն եվրո) նախապատրաստական աշխատանքներին, որն իրագործվելու է 2013-2016 թթ. ժամանակահատվածում: Հայաստանին կոչ է արվում՝ զարգացնել կարողությունները և ներգրավվել ածխաթթու գազերի շուկայի նոր

մեխանիզմին, որը մշակվելու է Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի մասնակիցների խորհրդաժողովի 17-րդ և 18-րդ նստաշրջաններից հետո: Հայաստանին նաև կոչ է արվում՝ լրացուցիչ ջանքեր գործադրել Կանկունի և Դուրբանի համաձայնագրերի լիարժեք կատարման ուղղությամբ, մասնավորապես՝ մշակել ածխաթթու գազի ցածր արտանետումների ապահովման ռազմավարություն:

Ինչ վերաբերում է **շրջակա միջավայրին,** ապա շարունակվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին նոր օրենքի նախագծի մշակումն աշխատանքային խմբի կողմից, որի կազմում ներկայացված է նաև քաղաքացիական հասարակությունը: Բնապահպանության նախարարությունն անցում է կատարել էլեկտրոնային փաստաթղթավորման համակարգի՝ նպատակ ունենալով բարձրացնել իր գործունեության թափանցիկությունը: Շարունակել է մտահոգության տեղիք տալ անտառազրկումը, այդ թվում՝ ապօրինի անտառահատումները: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հարցեր են բարձրացրել այն մասին, թե արդյոք փոփոխված հանքային օրենսգիրքը կարող է ապահովել հանքային պաշարների կառավարման բարելավման և շրջակա միջավայրի պաշտպանության համակարգ, քանի որ այն չի նախատեսում որևէ վճարում պաշարների օգտագործման կամ թափոնների հեռացման համար: Հայաստանին կոչ է արվում կատարելագործել բնապահպանական օրենսդրությունը և վարչական կարողությունները, հետևողականորեն կիրառել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգերը, և առանձնահատուկ ուշադրություն դարձնել հանրության մասնակցությանը:

Իր գործունեություն է շարունակել **Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը** («REC-C»): Կենտրոնի ֆինանսական և կառուցակարգային շարունակելիությունը դեռևս բարելավման կարիք ունի:

Ինչ վերաբերում է **քաղաքացիական պաշտպանությանը**, ապա ԵՄ-ի ֆինանսավորմամբ հունիսին մեկնարկել է աղետների ռիսկերի նվազեցման ծրագիրը՝ ի շարունակումն նախկին նախաձեռնությունների: Հայաստանը նաև շարունակել է մասնակցել Արևելյան գործընկերության հատուկ ծրագրին՝ ուղղված բնական և տեխնածին աղետների կանխարգելմանը, պատրաստականությանը և արձագանքին («PPRD East»): Հայաստանը ծրագրի շրջանակներում մասնակցում է Տարածաշրջանային ռիսկերի էլեկտրոնային ատլասի ստեղծմանը: Հայաստանի համապատասխան կառույցներն այժմ արդեն ներգրավված են համապատասխան աշխատանքներին, և ատլասի ստեղծման փուլը երկրում մոտ է ավարտին: Հայաստանին կոչ է արվվում օգտվել Արևելյան գործընկերության տարածաշրջանի Ռիսկերի գնահատման քաղաքականության ուղղորդիչ փաստաթղթից, որը մշակվել է «PPRD East» ծրագրի շրջանակներում:

«Աղետների նկատմամբ պետությունների և համայնքների դիմադրողականության ամրապնդման Հիոգոյի գործողությունների ծրագրի» կատարման շրջանակներում Հայաստանը ստեղծել է Բնական աղետների ռիսկերի նվազեցման պլատֆորմ, ինչպես նաև՝ 2011 և 2012 թվականներին ներկայացրել առաջընթացի ազգային զեկույց:

Հայաստանի **էլեկտրոնային հաղորդակցության** միջոցների շուկան կայուն աճ է ապրել 2012 թվականին: Երկրում դրական զարգացումներ են նկատվել թե ֆիքսված, թե բջջային լայնաշերտ կապի ծառայությունների օգտագործման ցուցանիշներում՝ տվյալների հաղորդման ցանցերի զարգացման և ընդլայնման շնորհիվ: Սույն փաստաթուղթը գրելու պահին Հայաստանում գործում էին բջջային կապի երեք օպերատորներ, որոնք շահագործում էին բջջային կապի 3G ստանդարտի վրա հիմնված ցանցեր: Օպերատորներից մեկը Երևանում արդեն առաջարկում է 4G/LTE-ի վրա հիմնված առևտրային ծառայություններ: Կարգավորող մարմինը 2012 թվականին ներդրել է ֆիքսված կապի հիմնական օպերատորի «պասիվ» ենթակառուցվածքի պարտադիր համատեղ օգտագործման կարգ՝ մրցակցությունն ավելացնելու նպատակով: 2012 թվականի դեկտեմբերին կարգավորող մարմինը որոշում է կայացրել բջջային համարների փոխադրելիության սկզբունքների և ժամանակացույցի վերաբերյալ, որի մեկնարկը նախատեսվում է 2014 թվականի հունվարին:

Ինչ վերաբերում է **տեսալսողական քաղաքականությանը**, ապա Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի տվյալներով, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը վերահսկողական բավարար գործառույթներ չի իրականացրել հեռարձակման շուկայում կենտրոնացումը և մենաշնորհացումը կանխելու ուղղությամբ:

Հետազոտությունների և տեխնոլոգիական զարգացումների (FP7) ԵՄ-ի յոթերորդ շրջանակային ծրագրի և Եվրոպայի հարևանների հետ համագործակցության սերտացման առաջարկների «ERA-WIDE» հրավերի շրջանակներում հաստատվել է Հայաստանին միտված երեք ծրագրերի ֆինանսավորումը տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների, բնապահպանության և ֆիզիկայի բնագավառներում: Արդյունքում, FP7-ից ֆինանսավորվող և հայաստանյան գործընկերների մասնակցությամբ իրականացվող ընթացիկ ծրագրերի թիվն ավելացել է՝ հասնելով 25-ի: Այդ ծրագրերին ԵՄ-ի ընդհանուր օժանդակությունը կազմում է 70 միլիոն եվրո, որից ավելի քան 2 միլիոնն ուղղվել է ծրագրերին մասնակցող հայաստանյան 17 հաստատություններին:

7. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Շարունակվել է Հայաստանի **Կրթության** զարգացման 2011-2012 թթ. ազգային ռազմավարության իրագործումը, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների կրթական հատուկ կարիքներն արտացոլող օրենսդրական փոփոխությունների նախապատրաստումը և դասավանդման նոր մեթոդների գծով 1,000 ուսուցիչների վերապատրաստումը:

Այս համատեքստում, **բարձրագույն կրթությունը** Հայաստանում վճռական քայլերով առաջ է շարժվել Բոլոնիայի սկզբունքների կատարման ուղղությամբ, չնայած որ դեռևս անհրաժեշտ են լրացուցիչ զուգահեռ միջոցառումներ: Պահպանվում են որոշակի մարտահրավերներ որակի երաշխավորման ներքին և արտաքին մեխանիզմների ձևավորման հարցում, բարձրագույն կրթության ֆինանսավորման մեխանիզմի բարեփոխման գործում, միջազգային ցանցերին ինտեգրվելու հարցում և բարձրագույն կրթության ոլորտի և աշխատաշուկայի միջև կապեր ստեղծելու գործում: Հայաստանը հուլիսին երեք տարով ստանձնել է Բոլոնիայի հետագա աշխատանքների կազմակերպման խմբի քարտուղարությունը: Հայաստանը հյուրընկալելու է Եվրոպայի բարձրագույն կրթության տարածքի հաջորդ նախարարական խորհրդաժողովը, որն անցկացվելու է 2015 թվականին:

Հայաստանի կառավարությունը հուլիսին ընդունել է **մասնագիտական կրթության և վերապատրաստման** բարեփոխումների հայեցակարգը և հարակից՝ 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը: Մասնագիտական կրթության և վերապատրաստման ազգային հիմնադրամը ստեղծել է հոգաբարձուների խորհուրդ, որի կազմում ներկայացված են պետական կառույցները և սոցիալական գործընկերները: Հայաստանը նախատեսում է մասնագիտական կրթության և վերապատրաստման հաստատությունների մշտադիտարկման և գնահատման համակարգ ներդնել 2013 թվականին: Մասնագիտական կրթության և վերապատրաստման բարեփոխումներին ԵՄ-ի կողմից ցուցաբերվող բյուջետային օժանդակությունն ավելացվել է՝ ԱԳԻՀԾ ծրագրի շրջանակում կատարված լրացուցիչ հատկացման հաշվին:

Հայաստանը շարունակել է ակտիվորեն ներգրավված մնալ **Տեմպուս** և **Էռազմուս Մունդուս** ծրագրերին: Հայաստանյան ինը ծրագրեր են ընտրվել Տեմպուս IV ծրագրի օժանդակության համար: Հայաստանը նաև 13 նոր կրթաթոշակներ է ստացել Էռազմուս Մունդուս ծրագրի համատեղ մագիստրոսական դասընթացների և երկու նոր կրթաթոշակներ՝ Էռազմուս Մունդուս ծրագրի դոկտորանտուրայի համար, որից զատ ևս 259 դրամաշնորհներ են տրամադրվել համալսարանական կոնսորցիումի շրջանակներում կարճատև ճանապարհորդություններ կազմակերպելու համար: Հայաստանյան 10 հաստատություններ և 13 հետազոտողներ մասնակցել են **Մարի Կյուրիի անվան ծրագրերին**, որոնցով օժանդակություն է

ցուցաբերվում հետազոտողների վերապատրաստմանը, ճանապարհորդություններին և կարիերայի զարգացմանը:

Հայ երիտասարդները և հայաստանյան երիտասարդական կազմակերպությունները շարունակել են օգուտ քաղել «**Youth in Action**» ծրագրի շրջանակում ընձեռված հնարավորություններից: 2012 և 2013 թվականներին ԵՀՔ-ի «ENPI» գործիքի շրջանակներում լրացուցիչ ֆինանսավորում է տրամադրվում «Youth in Action» ծրագրին՝ ԵՄ-ի և Արևելյան գործընկերության պետությունների երիտասարդների, աշխատող երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցությունը սերտացնելու նպատակով: 2012 թվականին «Youth in Action» ծրագրի շրջանակում Արևելյան գործընկերության «Երիտասարդական պատուհանի» («Youth Window») ստեղծման շնորհիվ ավելացել է այդ ծրագրի երիտասարդ հայ մասնակիցների թիվը: 2012 թվականին ընտրվել են 365 ծրագրեր, որոնք ուղղված են եղել 1,022 հայ երիտասարդների: Մարտին Հայաստանը հյուրընկալել է Արևելյան գործընկերության 4-րդ պլատֆորմի «Ժողովուրդների միջև շփումների» **երիտասարդական** միջոցառումը, որը կազմակերպվել էր Եվրոպական հանձնաժողովի կողմից: Միջոցառումը հիմնականում նվիրված էր օժանդակության հնարավորությունների ավելացմանը, Եվրոպական կամավորական ծառայությանը և տարածաշրջանում վերապատրաստման և ցանցային համագործակցության հնարավորություններին:

Արևելյան գործընկերության Մշակույթի ծրագրի շրջանակում ցուցաբերված օժանդակության շնորհիվ ավելացել են մշակութային ժառանգության պահպանության և **մշակույթի** առաջմղման ուղղությամբ գործադրվող ջանքերը: 2012 թվականին Հայաստանում մեկնարկել են 11 ծրագրեր, ներառյալ կինոյի, մշակութային տարածքների, պահպանության, ազգային փոքրամասնությունների նկատմամբ հավասար վերաբերմունքի միջոցառումներով, որոնց մասնակցել են մշակույթի ոլորտի տարբեր շահագրգիռ սուբյեկտներ:

Հայաստանի Նախագահը սեպտեմբերին կարգադրել է **Առողջապահության** նախարարությանը՝ կազմել գործողությունների հրատապ ծրագիր բուժօգնության որակը բարելավելու և ոլորտում կոռուպցիան հաղթահարելու նպատակով, ներառյալ՝ դեղերի պետական գնումների մասով: Հայաստանը շարունակել է առողջապահական նոր ռազմավարության մշակումը: Հայաստանում նախապատրաստվում է «Դեղերի և կենսաբանորեն ակտիվ հավելանյութերի մասին» նոր օրենքի նախագիծ, որը նախատեսվում է մոտարկել ԵՄ-ի ստանդարտներին: